ԴԱՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆԸ. ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ԳՈՀԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բանալի բառեր - Վահրամ Բաբայան, կոմպոզիտոր, հայ ժամանակակից երաժշտություն, դաշնամուրային կամերային ստեղծագործություններ, Կոնցերտ ֆլեյտայի, կլառնետի (in B), ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար, վարիացիա, «Մարսելիեզ»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժամանակակից կոմպոզիտորական դպրոցի տաղանդավոր ներկայացուցիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Վահրամ Բաբայանը բազմաժանր կոմպոզիտոր է: Նա հեղինակ է վեց օպերայի («Օտարականը», «Բեթհովենի նամակները», «Համլետ», «Մուսա լեռան 40 օրը», «Liramlarum», «Երգ սիրո և գեղեցկության»), չորս բալետի («Պիգմալիոն», «Պան», «Դեպի Լույս», «Փոքրիկ իշխանը»), ինը սիմֆոնիայի, երկու սիմֆոնիկ պոեմի, բազմաթիվ գործիքային կոնցերտների, վոկալ-սիմֆոնիկ և խմբերգային երկերի, երեք կամերային սիմֆոնիայի, կամերային անսամբլների, վոկալ-գործիքային շարքերի և այլն: Նրա ստեղծագործությունները հնչել և հրատարակվել են ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Շվեյցիարիայում, Մեծ Բրիտանիայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

1975թ. Ավետիք Իսահակյանի 100-ամյակին նվիրված հանրապետական մրցույթում կոմպոզիտորի №3 սիմֆոնիան՝ ըստ բանաստեղծի «Աբու-Լալա Մահարի» պոեմի, արժանացել է մրցանակի[1], 1982թ. կոմպոզիտորն արժանացել է Հայաստանի Պետական երիտասարդական մրցանակի, իսկ 1986թ. Հունգարիայում պարգևատրվել է «Ֆերենց Լիստի» հուշամեդալով՝ կոմպոզիտորի ծննդյան 175–ամյակի առիթով:

Վ. Բաբայանի երաժշտության փառատոներ են կազմակերպվել Հայաստանում (1998, 2005, 2018) և Ֆրանսիայում (2014):

2003թ. նա պարգևատրվել է ՅՈՒՆԵՍԿՕ–ի «Արամ Խաչատրյան» հուշամեդալով՝ կոմպոզիտորի ծննդյան 100–ամյակի առիթով, իսկ Յոթերորդ՝ «Լայպցիգյան» լարային կվարտետի համար 2009-ին արժանացել «Թեքեյան» մշակութային միության «Վահան Թեքեյան» միջազգային

[1] Տե՛ս **Արևշատյան Ա., Ռուխկյան Մ.,** Հայկական երաժշտական համաժողով, Կոմպոզիտորներ, Բաբայան Վ., Երևան, 2009, էջ 4:

մրցանակին: Նույն թվականին դաշնամուրի և լարային նվագախմբի համար գրված «Hymn» ստեղծագործությունն արժանացել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության «Լավագույն ստեղծագործություն» մրցանակին: Կոմպոզիտորը պարգևատրվել է ՀՀ Մշակույթի նախարարության ոսկե մեդալով (2011)[1]:

ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Վահրամ Բաբայանը ծնվել է Երևանում, 1948թ. օգոստոսի 19-ին: Նրա հայրը՝ Օհան Արսենովիչը, սովորել է Խարկովի կոնսերվատորիայում՝ կոմպոզիցիայի և փողային գործիքների բաժիններում: Նկատելով որդու ընդունակությունները՝ նա սկսում է երաժշտություն ուսուցանել, պատմել երաժշտության և երաժիշտների մասին, տանում իր հետ համերգների:

Վեց տարեկան հասակում, տպավորված ավագ եղբոր՝ գրականությամբ հրապուրված Արսենի, բանաստեղծությամբ, գրում է «Գարուն» երգը՝ երկու ձայնի և դաշնամուրի համար: Հաջորդիվ գրում է «Կոնտրդանսը»՝ շեփորի և դաշնամուրի համար, իսկ 1955-1957թթ. ստեղծում առաջին դաշնամուրային շարքը՝ «Մանկական ալբոմ №1»,-ը՝ բաղկացած 24 պիեսներից՝ 24 բոպե տևողությամբ, որն առաջին անգամ կատարել է հեղինակը Երևանում՝ 1957թ. դեկտեմբերի 24-ին: Վ.Բաբայանը Ալ.Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում միաժամանակ սովորել է երկու բաժիններում. դաշնամուր՝ Ի. Մանուկյանի և կոմպոզիցիա՝ Ս. Սամվելյանի դասարաններում:

9 տարեկանում Բաբայանը գրել է քառամաս սիմֆոնիա լարային նվագախմբի համար, որը հնչել է 1957-ին: Նույն թվականին համերգներից մեկի ժամանակ նա պետք է նվագեր իր «Մանկական ալբոմ №1»-ը, սակայն դուրս գալով բեմ՝ նա հասկանում է, որ իրեն արդեն ճանաչում են, փոխում է ծրագիրը, և դաշնամուրով կատարում իր սիմֆոնիան: Դահլիճում ներկա էին Ալ. Հարությունյանը, Էդ. Միրզոյանը և Ա. Բաբաջանյանը: Համերգից հետո Ա. Բաբաջանյանը, դիմելով նրա հորն ասում է. «Օհան, Ձեր տղան մեծ կոմպոզիտոր կդառնա...»[2]:

Սակայն այս բոլոր հաջողություններին հաջորդում է հուսահատությունը: Հայաստանի «Պատանի և երիտասարդ տաղանդների փառատոնի» ժամանակ լավագույն աշակերտները պարգևատրվում են և նվերներ ստանում: Երբ հերթը հասնում է Բաբայանին, ապա նրան շրջանցում են և ն-

---

[1] Տե՛ս Հայ երաժշտության հանրագիտարան, Երևան, 2019, էջ 99:

[2] Տե՛ս **Рухкян М.,** Портреты армянских композиторов”, Ереван, 2009, стр. 57.

վերը տալիս մեկ այլ աշակերտի: Նա երազում էր նավակի մասին, որը բաժին հասավ ուրիշին: Վերադառնալով տուն՝ չասելով ոչ-ոքի, նստում է դաշնամուրի առջև և գրում «Անուրջների նավակ» ստեղծագործությունը, որը հետագայում ներառում է «Մանկական ալբոմ №1»-ում՝ 22-րդ համարի ներքո[1]:

1968թ. Վահրամ Բաբայանն ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, սովորում միաժամանակ երկու բաժիններում՝ դաշնամուր (Վ. Ահարոնյան) և կոմպոզիցիա (Գ. Եղիազարյան): Ընդունելության համար ներկայացնում է Սիմֆոնիան լարայինների համար, №1 Սիմֆոնիան՝ մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար և №1 դաշնամուրային կոնցերտը: Կոնսերվատորիան ավարտելիս նա արդեն հեղինակ էր ավելի քան 50 ստեղծագործությունների, որոնց թվում էին սոնատներ, կվարտետներ, №2 դաշնամուրային կոնցերտը, №2 և №3 սիմֆոնիաները մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար, մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Անտունի» խորեոգրաֆիկ պոեմը՝ նվիրված Կոմիտասի 100-ամյա հոբելյանին, երկու գործողությամբ «Օտարական» օպերան և բազմաթիվ դաշնամուրային ստեղծագործություններ:

Կոմպոզիտորի կյանքի շրջադարձային փուլերից մեկը դարձավ Սոնատը դաշնամուրի և լիտավրների համար (1970), որն առաջին անգամ հնչեց հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների համերգի ընթացքում հեղինակի (դաշնամուր) և Ֆ. Մելիքյանի (լիտավրներ) կատարմամբ: Գեորգի Տիգրանովը Սոնատը գնահատեց որպես «հզոր ատոմային պայթյուն», իսկ պրոֆեսոր Ռաֆայել Ստեփանյանը նշեց, որ «Սոնատը միջազգային մասշտաբ ունի»[2]:

Մարգարիտա Ռուխկյանի գնահատմամբ՝ «Վահրամ Բաբայանը համոզված է, որ սոնատային՝ համապարփակ երաժշտական ձևը, մարդկային մտքի մեծագույն նվաճումն է, փիլիսոփայության և, մասնավորապես, երաժշտական մշակույթի զարգացման մի մասը: Սոնատային ձևն այնպես, ինչպես ներկայացված է Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի և նրանց հաջորդների ստեղծագործության մեջ՝ հնարավորություն էր ընձեռում արտոցոլել կյանքը տարբեր փուլերում: Կարելի է ասել, որ Վահրամ Բաբայանի ստեղծագործությունների հիմքը սոնատային ձևն է, թեև կոմպոզիտորի սոնատները, սիմֆոնիաները, կոնցերտները և կվարտետները հագեցած են 20-րդ դարի երկրորդ կեսին բնորոշ երաժշտական լեզվի տարրերով՝ սոնատային ձևի պահպանմամբ»[3]:

---

[1] Տե՛ս **Рухкян М.,** Портреты армянских композиторов, Ереван, 2009, стр. 58.

[2] Տե՛ս **Рухкян М.,** Портреты армянских композиторов, Ереван, 2009, стр. 64.

[3] Տե՛ս **Рухкян М.,** Портреты армянских композиторов, Ереван, 2009, стр. 63.

XX դարի 60–ականներին Վ. Բաբայանի ստեղծագործություններում լսելի են ավանգարդ ուղղությանը բնորոշ գծեր: Նրա ստեղծագործության մեջ նկատելի է հակումը ավանգարդի ոչ թե արտաքին դրսևորման հանդեպ, որը կապված է նոր ստեղծագործական հնարների կիրառման հետ, այլ կերպարային նորարարության նկատմամբ, որն ընդունակ է հաղորդելու տիեզերքի և հասարակության մասին ժամանակակից պատկերացումները: Բացի «Ավանգարդ» ուղղությունից, նա ստեղծագործել է սերիալ, ալեատորիկ, սոնորային և այլ տեխնիկաներով:

Վ. Բաբայանը ձգտում էր ձեռք բերել նոր գիտելիքներ, ստեղծագործական գաղափարներ և այս ամենի հետ մեկտեղ՝ ծանոթանալ կոմպոզիտոր Դմիտրի Շոստակովիչի հետ: Շոստակովիչին հասցեագրված նամակի պատասխանը շատ չուշացավ. «Թանկագին Վահրամ, ես արդեն վաղուց չեմ դասավանդում: Եթե Դուք լինեք Մոսկվայում կամ ես՝ Երևանում, ուրախ կլինեմ ծանոթանալ Ձեր ստեղծագործություններին: Մաղթում եմ Ձեզ առողջություն և ստեղծագործական հաջողություններ: Դ. Շոստակովիչ, 3 նոյեմբերի 1970թ.»[1]: Շոստակովիչի հետ հանդիպելու նպատակով Վ. Բաբայանը մեկնում է Մոսկվա՝ իր թղթապանակում ունենալով Սոնատը դաշնամուրի և լիտավրների համար և մի քանի այլ ստեղծագործությունների նոտաներ: Շոստակովիչի հետ հանդիպումից տպավորված նա գրում է «Կոմպոզիտորների դիմակահանդես կամ երաժշտական ուղևորություն ժամանակի մեջ» դաշնամուրային շարքը (1971), որը կազմված է 64 վարիացիաների շղթաներից: Վարիացիաների թիվը պատահական չէր ընտրված. այդքան քրոմոսոմ է պարունակում մարդու ԴՆԹ-ն, շախմատի դաշտը նույնպես բաղկացած է 64 վանդակներից, Աստվածաշնչում մարդու կյանքի նկարագրությունը 64 է: Յուրաքանչյուր վարիացիան նվիրված է մեկ կոմպոզիտորի և հնարավորինս մոտեցված տվյալ կոմպոզիտորի ստեղծագործական ոճին: Ընդգրկված են գերմանական, իտալական, եվրոպական ռոմանտիկներից՝ մինչև Շոստակովիչ, Բուլեզ, Շտոքհաուզեն, Շնիտկե և Վահրամ Բաբայան:

1983թ. Երևան է ժամանում «Alphons Leduc» հրատարակչության ներկայացուցիչ Ժան Լեդուկը: Ծանոթանալով հայ կոմպոզիտորների հետ և լսելով նրանց ստեղծագործությունները՝ նա ամրագրեց մի շարք ստեղծագործությունների պատվերներ: Այսպես ստեղծվեց Բաբայանի «Mantra quasi sonata» ստեղծագործությունը՝ գրված սոպրանո-սաքսոֆոնի և դաշնամուրի համար, որը կատարել են Յուրի Բոբրինսկին (սաքսոֆոն) և հե-

[1] Տե՛ս **Рухкян М.,** Портреты армянских композиторов”, Ереван, 2009, стр. 64.

ղինակը: Այս ստեղծագործությունը հրատարակվել է «Alphons Leduc» ամսագրում՝ 1986թ.: 2004թ. Վահրամ Բաբայանն այս ստեղծագործությունն անվանեց «Mantra №1»:

«Hilltop Music Publications» անգլիական երաժշտական հրատարակչության պատվերով նա գրում է «Mantra №2» ալտ-սաքսոֆոնի համար (հրատարակվել է 2006թ.), ապա «Mantra №3»-ը՝ տենոր-սաքսոֆոնի և դաշնամուրի համար:

Այսպիսով ստացվում է «Mantra»-ների շարք:

1983թ. սկզբին Բաբայանն ավարտում է Ռեքվիեմը լարային նվագախմբի համար: «Երկար եմ մտածել. գրե՞լ Ռեքվիեմ, թե՞ ոչ, քանի որ Մոցարտը գրել է Ռեքվիեմ 35 տարեկան հասակում և նրա կյանքը կանգ առավ այդ տարիքում»[1]: Վահրամ Բաբայանն այդ ժամանակ նույնպես 35 տարեկան էր:

Այս շրջանը շրջադարձային էր կոմպոզիտորի համար: Ստանալով ոտքի ծանր վնասվածք՝ նրան տեղափոխում են սկզբում Երևանի, այնուհետև՝ Մոսկվայի №59 կլինիկական հիվանդանոց, որտեղ ենթարկվում է մի քանի վիրահատությունների: Վերականգնողական շրջանում ավարտին է հասցնում №3 կոնցերտը՝ «Ռոմանտիկական»՝ դաշնամուրի և նվագախմբի համար (կոնցերտը նվիրում է տվյալ հիվանդանոցի բժշկական անձնակազմին), գրում է մանկական կոնցերտ դաշնամուրի և նվագախմբի համար, №5 լարային կվարտետը, «Մանկական ալբոմ №2» դաշնամուրի համար: 1984թ. վերադառնում է Երևան, իսկ 1985թ. գրում «Սերենադը» սոպրանոյի, ֆլեյտայի, կոնտրալտո-ֆլեյտայի (G), ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար՝ Արսեն Բաբայանի բանաստեղծության հիման վրա:

Արդեն լիովին ապաքինված Բաբայանն ունենում է հեղինակային համերգ Հայաստանի Կոմպոզիտորների միության տան դահլիճում՝ հանդես գալով որպես դաշնակահար: Համերգի ընթացքում հնչում են կամերային-գործիքային ստեղծագործությունները՝ «Mantra №1»՝ սաքսոֆոնի և դաշնամուրի համար, №1 սոնատը՝ մենակատար ջութակի համար, №4 սոնատը՝ դաշնամուրի համար, №4 լարային կվարտետը և «Պոետի ծնունդը» վոկալ շարքը (Ե. Չարենցի խոսքերով)՝ սոպրանո, բաս և դաշնամուր:

Երաժշտագետ Լիլիթ Երնջակյանը բարձր գնահատեց Վահրամ Բաբայանի գործունեությունը և համերգի ընթացքում հնչած ստեղծագործությունները. «Ինչպես №4 Լարային կվարտետում, այնպես էլ հեղինակի բոլոր ստեղծագործություններում ուրվագծվում է այն ստեղծագործական ոճը, որը պարունակում է դասական ռոմանտիզմի ավանդույթները, բայց միևնույն ժամանակ ազգային ինտոնացիաները և ժամանակակից երաժշ-

[1] Կոմպոզիտորի հետ ունեցած անձնական զրույցից:

տության հնչյունները»[1]:

1978թ. Վ. Բաբայանն առաջին անգամ երիտասարդ արվեստագետների հետ միասին այցելում է Գերմանիա և ունենում համերգներ՝ հանդես գալով որպես դաշնակահար, ստեղծում է №2 սոնատը՝ մենակատար ջութակի համար:

1999-ից Գերմանիա այցելությունները դառնում են ավելի հաճախակի: Այս շրջանում գրում է №6 և №7 լարային կվարտետները, ամերիկացի դաշնակահար Իֆա Մենգելկոխի խնդրանքով գրում №7 սոնատը՝ դաշնամուրի համար՝ բաղկացած վեց մասից: Հենց Մենգելկոխն էլ կատարեց Սոնատն առաջին անգամ՝ Գրիմա քաղաքում:

1998թ. հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 1-ը Երևանի Արամ Խաչատրյան մեծ դահլիճում տեղի է ունենում Վահրամ Բաբայանի երաժշտության առաջին փառատոնը (փառատոնի ընթացում տեղի ունեցավ յոթ համերգ). բազմաթիվ ստեղծագործությունների շարքում կատարվեցին №5 և №6 սիմֆոնիաները՝ Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ: Երաժշտագետ Մարգարիտա Ռուխկյանը, տպավորված փառատոնից, գրեց «Նվիրվում է կատարողներին...» հոդվածը[2]:

2000թ. Գրիմա քաղաքում Բախին նվիրված Միջազգային փառատոնի շրջանակներում հնչեց նաև Վ. Բաբայանի՝ փառատոնի կազմակերպիչների պատվերով դաշնամուրի և լարային նվագախմբի համար գրված «Hymn» ստեղծագործությունը՝ հիմնված B-A-C-H հնչյունների վրա:

2001թ. լինելով Ավստրիայում՝ այն վայրերում, որտեղ ապրել և ստեղծագործել են Բեթհովենը, Շուբերտը, Բրուքները, Մալերը, Բաբայանն ստեղծում է «Linz» տրիոն՝ ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար:

2005թ. նոյեմբերին անց է կացվում Բաբայանի հեղինակային երկրորդ փառատոնը, որը բաղկացած էր կամերային երաժշտության չորս համերգներից: Ծրագրում ընդգրկված էին 20 Պրելյուդներ՝ դաշնամուրի համար (դրանք կոմպոզիտորն ստեղծագործել էր 11–12 տարեկան հասակում), «Mantra N1 quasi sonata» սոպրանո-սաքսոֆոնի և դաշնամուրի համար (1983)՝ Արտյոմ Եղիազարյանի և Աստղիկ Լևոնյանի կատարմամբ, «Mantra №2» ալտ-սաքսոֆոնի և դաշնամուրի համար (2004)՝ Ալեքսանդր Մանուկյանի և Նատալիա Մնացականյանի կատարմամբ:

Ինչպես նշում է կոմպոզիտոր Արթուր Ավանեսովը՝ «Այս ստեղծագործություններում արտացոլված է կոմպոզիտորի անդրադարձը Հնդ-

---

[1] Տե՛ս **Երնջակյան Լ.,** Ճշմարիտ ելևէջումներով, «Ավանգարդ», 1985, հուլիսի 5, N67:

[2] См. **Рухкян М.,** Исполнителям посвящается… «Республика Армения», 20 ноября 1998.

կաստանի, Տիբեթի, Արևելքի բուդդայական աշխարհներին: Այս մշակույթների օբյեկտիվ մտածելակերպը, հոգևոր նկարագիրը ձևավորվել և ձևավորվում է երաժշտության իմացության, փիլիսոփայության և պոեզիայի հիման վրա: Զգտելով դեպի մեդիտացիան, ստատիկ դրամատուրգիան, արևելքի (բուդդայական) գեղարվեստական համակարգն արդեն շատ վաղուց ներթափանցել են հայ երաժշտության մեջ»[1]:

ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ ՖԼԵՅՏԱՅԻ, ԿԼԱՌՆԵՏԻ (IN B), ՋՈՒԹԱԿԻ, ԹԱՎՋՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ (OP. 94)

1988թ. Վ. Բաբայանը գրում է Կոնցերտ ֆլեյտայի, կլառնետի (in B), ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար (op. 94): Ինչպես նշում է կոմպոզիտորը՝ նախնական տարբերակում այն անվանել է Կվինտետ, սակայն այնուհետև փոխեց անվանումը՝ դարձնելով Կոնցերտ, որպեսզի հնարավորություն տա բոլոր գործիքներին հանդես գալ հավասարապես[2]: Թեև Բաբայանն այդքան էլ հավանություն չի տալիս մեջբերումներին, սակայն որոշ ստեղծագործություններում կիրառել է դրանք, օրինակ №4 Լարային կվարտետում մեջբերել է «Չեմ կըրնա խաղա», իսկ Կոնցերտում՝ մեջբերել է «Մարսելիեզը»՝ Ֆրանսիայի պետական օրհներգը[3]: Կոնցերտը սկսում է ֆլեյտան՝ պարզ, դրամատիկ նուրբ թեմայով: (Նոտային օրինակ 1)



(նոտային օրինակ 1)

[1] Տե՛ս **Аванесов А.,** Отражение дзен-буддизма в музыке ряда современных армянских композиторов, «Արվեստ և ժամանակ. Հայացք Գյումրուց », №1, 2006, էջ 50-55:

[2] Կոմպոզիտորի հետ ունեցած անձնական զրույցից:

[3] Կոմպոզիտորի հետ ունեցած անձնական զրույցից:

Դաշնամուրի մուտքը սկսվում է գրաֆիկ պարտիտուրի տարրերով, ինչը Կոնցերտում կոմպոզիտորն առատ կերպով օգտագործել է: (Նոտային օրինակ 2)



(նոտային օրինակ 2)

XX դարի երկրորդ կեսին որոշ կոմպոզիտորներ ստեղծագործում էին գրաֆիկ նոտագրությամբ: Գրաֆիկ նոտագրությունը նշում է միայն կատարվող երաժշտության ընդհանուր ուրվագծերը, նրա նշանները կարող են արտահայտել պարզ նոտագրություն, բայց և կարող են արտահայտել երկրաչափական ձևեր, ներկված կամ չներկված տարբեր ձևի գծեր՝ երկարությամբ և հաստությամբ: Ստեղծագործությունների պարտիտուրներում, որտեղ օգտագործված են գրաֆիկ նոտագրություններ, հաջորդում են կատարողների համար բանավոր ցուցումներ: Առաջին գրաֆիկ նոտագրության օրինակներից է ամերիկացի կոմպոզիտոր Մորտոն Ֆելդմանի «Projetions» ստեղծագործությունը՝ գրված սոլո թավջութակի համար (1950-1951): Ստեղծագործությունն ամբողջովին կամ մասամբ գրված է գրաֆիկ նոտագրությամբ: Գրաֆիկ նոտագրություն օգտագործել են նաև Քեյջն, Լիգետին, Շտոքհաուզենը և այլն[1]:

Գլխավոր թեման սկսում է ֆլեյտան և փոխանցում կլառնետին. ասես երկխոսություն է սկսվում նրանց միջև: Ֆլեյտայի և կլառնետի նվագամասերում, պոլիռիթմիայի շնորհիվ երաժշտությունը դառնում է դրամատիկ, անհանգիստ, և աստիճանաբար մուտք են գործում ջութակը, թավջութակը և դաշնամուրը:

[1] Տե՛ս **Акопян Л.,** Музыкальный словарь Гроува, Москва, 2001, стр. 256.

№2 վարիացիան հանդես է գալիս կլառնետի նվագաբաժնում և արտահայտված է կետագծային ռիթմիկ պատկերով, իսկ ջութակի նվագաբաժնում շեշտված տրիոլներ են. այստեղ կոմպոզիտորն օգտագործել է «Մարսելիեզին» բնորոշ ռիթմիկ տարրեր, իսկ ակորդային ֆակտուրան ընդգծել է շեշտերով, ինչն էլ ստեղծում է քայլերգային բնույթ։



(նոտային օրինակ 3)

Փողային և լարային գործիքները հզոր դինամիկայով, էներգիայով լի հատվածը փոխանցում են դաշնամուրին՝ ծանր և շեշտված ակորդներին, նույնությամբ պատասխանում է թավջութակը։ (Նոտային օրինակ 4)



(նոտային օրինակ 4)

№3 վարիացիայում հնչում է գլխավոր թեման, որին հաջորդում են դաշնամուրի թախծոտ, մռայլ, ընդգծված ակորդները: Փողային գործիքների տրիոլների, ջութակի ֆլաժոլետների և թավջութակի տրիելների վրա կրկին հնչում են գլխավոր թեմայից հատվածներ: (Նոտային օրինակ 5)



(նոտային օրինակ 5)

№4 վարիացիայում դաշնամուրի հզոր տրիելները նախապատրաստում են թեմայի մուտքը, բայց արդեն հզոր դինամիկայով, անհանգիստ բնույթով, հագեցած ֆակտուրայով, ինչն արդեն ուղղորդում է ունկնդրին դեպի վերջին վարիացիան, որն էլ դառնում է ստեղծագործության գագաթնակետը: (Նոտային օրինակ 6 և 7)



(նոտային օրինակ 6 և 7)



№5 վարիացիայի, ինչպես և №4 վարիացիայի մուտքն սկսվում է դաշնամուրի տրիելներով, որը հանդիսանում է կապող օղակ: Լարային գործիքների նվագաբաժնում ինտերվալային սեքստոլները նմանվում են թմբուկների հաղթական երթի, այդ դրամատիկ հզոր կերպարի վրա հնչում է թեման: (Նոտային օրինակ 8)



(նոտային օրինակ 8)

Կոդա–ռեպրիզը եզրափակում է Կոնցերտը: Այստեղ ամփոփված են հատվածներ բոլոր վարիացիաներից: (Նոտային օրինակ 9)



(նոտային օրինակ 9)

Յուրաքանչյուր վարիացիան իր կառուցվածքով նման է սոնատային allegro–ին, ինչպես նաև յուրաքանչյուրում նշված է լատիներեն տերմիններով երաժշտության բնույթը, ինչն ավելի մատչելի է դարձնում ստեղծագործության կատարումը ճիշտ բնույթով:

Կոմպոզիտորը ստեղծագործության սկզբում նշել է նյութի տևողությունը. Կոնցերտն ունի 11 րոպե տևողություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վահրամ Բաբայանի Կոնցերտը ֆլեյտայի, կլառնետի (in B), ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար (op. 94) մեկ մասանի է: Կառուցվածքը հստակ պահպանված չէ, ինչպես դասական կոնցերտում, առկա են շեղումներ: Երաժշտական շարադրանքը կարծես վարիացիոն լինի. յուրաքանչյուր անգամ հանդես է գալիս նոր շարադրանք, նոր կերպար և հուզական նոր վիճակ: Կոմպոզիտորը յուրաքանչյուր վարիացիայում պահպանել է «Մարսելիեզի» փոքր հատվածներ, ռիթմեր՝ յուրաքանչյուր գործիքի նվագաբաժնում, ինչը հիմք է դառնում ստեղծագործության ամբողջականության և դրամատուրգիական զարգացման համար:

Гоар Карапетян, Хранитель классических традиций. Ваграм Бабаян - Талантливый представитель армянской современной композиторской школы, заслуженный деятель искусств РА Ваграм Бабаян является многожанровым композитором. Он - автор шести опер, девяти симфоний, двух симфонических поэм, многочисленных инструментальных концертов, во-

кально - симфонических и хоровых сочинений, трех камерных симфоний, камерных ансамблей, вокально- инструментальных сборников и т. д.

Важной частью его творчества являются камерные фортепианные произведения, в том числе Концерт для флейты, кларнета, скрипки, виолончели и фортепиано (op. 94, 1988), Фортепианное трио для скрипки, виолончели и фортепиано “Линц” (op. 131, 2001) и Фортепианный квартет для скрипки, виолончели, альта и фортепиано (op. 129, 2001).

Концерт для флейты, кларнета (in B), скрипки, виолончели и фортепиано - одноактное произведение. Структура четко не сохранена, как и в классическом концерте, есть отклонения. Музыкальное изложение будто вариационное, каждый раз наблюдается новое изложение, новый образ и эмоционально-новое состояние.

В каждой вариации композитор сохранил маленькие отрывки “Марсельезы”, ритмы - в каждой части инструмента, что становится основой для целостности и драматургического развития произведения.

Gohar Karapetyan, The Keeper of Classical Traditions: Vahram Babayan -

A talented representative of the modern Armenian school of composers, Honored Art Worker of the RA Vahram Babayan is a composer of various genres. He is the author of 6 operas, 9 symphonies, 2 symphonic poems, many instrumental concertos, vocal-symphonic and choral works, 3 chamber symphonies, chamber ensembles, vocal-instrumental compositions, etc.

An important part of his oeuvre is chamber piano works, including the Concerto for flute, clarinet, violin, violoncello and piano (op. 94, 1988), the Trio for piano, violin and violoncello "Linz" (op. 131, 2001) and Quartet for piano, violin, violoncello and viola (op. 129, 2001).

Concerto for flute, clarinet (in B), violin, violoncello and piano is a composition of one piece. It does not have a clearly ordered structure as there are deviations from the classical concerto. The musical composition seems to be variable: each time there is a new presentation, a new image and a new emotional state. The composer in each variation retained small fragments, the rhythms of the Marseillaise – in the party of each of the instruments which become the basis for the integrity and dramatic development of the work.

Ուղարկվել է խմբագրություն 25.10.2022թ.
Գրախոսվել է 10.11.2022թ.
Ստորագրվել է տպագրության 15.11.2022թ.